

Հանձնաժողովի որոշումները կարող են կիրառվել միայն դատական համակարգում գործոց շահելուց հետո, իսկ այս դաշտում դատարանների արտաքին ճնշումներին ենթարկվելու հավանականությունը շատ մեծ է:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, Հայաստանում դեռևս չի լուծվել արդյունավետ մրցակցային քաղաքանության ընդունման և կիրառման հիմնախնդիրը: Ավելին, դեռևս չի լուծվել տեղական շուկայում մրցակցության ապահովման գերակա խնդիրը: Մյուս կողմից, համաշխարհային տնտեսության զարգացմանը զուգընթաց ներկայում արդեն նկատվում է բազմակողմ մրցակցային քաղաքականության անհրաժեշտությունը: Այս առումով, առանց արդյունավետ ազգային մրցակցային օրենքի շատ դժվար կլինի դիմակայել այլ երկրների միջև զարգացող մրցակցային համագործակցությանը և գործունեության կողմինացմանը: Այստեղ հարկ է ընդգծել որ որպեսզի ազգային մրցակցային օրենքը լինի արդյունավետ, ապա այն պետք է մշակվի և կիրառվի ենելով տեղական պահանջներից (LCR's):

ԳՐԻԳՈՐ ԴԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՀ ԳԱԱ Մ.Թորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ.գ.թ.

ՀՀ ԱՐՏԱԶԵՒ ԱՌԵՎԱՐԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը փոքր, շրջափակված և բնական ռեսուրսներով աղքատ երկիր է՝ սահմանակից Թուրքիային (արևմուտքից), Աղրբեջանին (արևելքից), Վրաստանին (հյուսիսից) և Իրանին (հարավից): Հայաստանի անկախացումից անմիջապես հետո՝ ենելով քաղաքական պատճառներից, Թուրքիան և Աղրբեջանը փակեցին իրենց սահմանները Հայաստանի հետ: Մինչև օրս Հայաստանի և Աղրբեջանի միջև առկա հակամարտությունը զգալի ազդեցություն է ունենում Հայաստանի արտաքին առևտորի վրա: Հայաստանի հյուսիսային և հարավային սահմանները նույնպես ունեն սահմանափակ հնարավորություններ բեռնափոխադրումների համար: Այսպես, Իրանի հետ հիմնական ճանապարհը անցնում է լեռնաշղթայով և հաճախ դժվար անցանելի է, իսկ հիմնական ճանապարհը Վրաստանի տարածքով չի շահագործվում իր առավելագույն հնարավորությամբ: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք գնահատում են թե ինչպիսի ազդեցություն է ունենում շրջափակումը Հայաստանի արտաքին առևտորի վրա: Օրինակ, Պոլյակովը գնահատել է, որ շրջափակման վերացումը և տրանսպորտային ցանցի զարգացումը կարող է կրկնապատկել Հայաստանի արտահանման ծավալը և ավելացնել ՀՆԱ-ն ավելի քան 30%-ով¹:

Այսպիսով, չնայած գոյություն ունեցող բավական քաղաքական և ֆիզիկական առևտրային սահմանափակումներն, Հայաստանն անկախացումից ի վեր շարունակում է պահպանել ազատական առևտրային ուժիմն ու իր առևտրային դասակարգման սխեմայով ստանում է ամենաբարձր վարկանիշներից մեկը ԱԱՀ-ի կողմից: Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում առանձնացել է իր բավական ազատական առևտրային ուժիմով: Բացի ազատական առևտրային ուժիմից, բավական ազատական է նաև Հայաստանի տնտեսությունը: Այսպես, ըստ 2007թ. տնտեսական ազատականության ինդեքսի Հայաստանը համաշխարհային տնտեսության մեջ գրավել է 32-րդ տեղը²: Հայաստանն անդամակցեց ԱՀԿ-ին 2003թ. փետրվարի 5-ին և նաև համարվում է Սևծովյան տնտեսական համագործակցության (Black Sea Economic Cooperation, BSEC) անդամ, որը հիմնադրվել է 1992թ.³ մասնակից երկրների միջև տնտեսական համագործակցությունը խորացնելու և առևտրային սահմանափակումները վերացնելու նպատակով⁴:

Այսպիսով, կարել է փաստել, որ ՀՀ արտաքին առևտրային քաղաքականությունը հենց սկզբնական շրջանում բավական ազատական էր, որն էլ ավելի ազատականացվեց 2003թ. ԱՀԿ անդամակցությամբ: Ստեղծվել են գրեթե բոլոր անհրաժեշտ պայմաններն արտաքին առևտրատնտեսական գործարքների զարգացման և համաշխարհային տնտեսության ինտեգրվելու համար: Սակայն, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում կազմել, թե կոնկրետ Հայաստանի դեպքում որքանով է ազատական առևտրային քաղաքականությունն արդարացըթել իրեն, անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ առևտրային հաշվեկշիռը, մասնավորապես՝ տարածքային տեղաբաշխման և ապրանքային կառուցվածքները, այնուհետև փորձել գնահատել արտաքին առևտորի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

Այսպես, 1995թ. սկսած մինչև օրս ՀՀ առևտրային հաշվեկշիռը բացասական է, որը հիմնականում պայմանավորված է արտահանման համեմատարար փոքր և ներմուծման համեմատարար մեծ ծավալներով (տես՝ գծապատկեր 1): Ինչպես վկայում են գծապատկեր 1-ի տվյալները, ՀՀ առևտրային հաշվեկշիռի պակասուրդն ընդհուպ մինչև 1998թ. ունեցել է ամեն միտում՝ կազմելով 672.3 մլն. ԱՄՆ դոլար⁴, որը նշանակահատվածում առևտրային հաշվեկշիռի պակասուրդի ամենաբարձր ցուցանիշն է: Դա հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների շարունակական մեծացմամբ, որը 1997-1998թթ. զուգորդվել է նաև արտահանման կրճատմամբ: Առևտրային հաշվեկշիռի 1999թ. պակասուրդի կրճատման արդյունք է ներմուծման կտրուկ նվազումը, քանի արտահանման ամը: Նախորդ տարվա համեմատ արտահանումն ամեն է ընդամենը 4.5%-ով՝ կազմելով 233.5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը կրճատվել է 10.4%-ով՝ կազմելով 801.7


¹ Evgeny Polyakov. "Changing Trade Patterns after Conflict Resolution in South Caucasus, Washington D. C.: World Bank", 2002.

² "Index of Economic Freedom", Heritage Foundation, The Wall Street Journal 2007.

³ BSEC-ի անդամակցող երկրներն են՝ Ալբանիան, Հայաստանը, Աղրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Հունաստանը, Սուլունիան, Ռուսաստանը, Ադրբեյջանը, Ղազախստանը, Թուրքիան, Պակիստանը:

⁴ Հողկածում իրականացված վելուծությունը հիմնված է ՀՀ վիճակագրական ծառայության նյութերի վրա:

մլն. ԱՄՆ դոլար: 2001թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազման պատճառն այն է, որ ներմուծման ծավալները կրճատվել են 10.8 մլն. ԱՄՆ դոլարով, իսկ արտահանումն աճել է 45.3 մլն. ԱՄՆ դոլարով՝ համապատասխանաբար կազմելով 874.3 և 342.8 մլն. ԱՄՆ դոլար:



Գծապատկեր 1. ՀՀ առևտրային հաշվեկշռի դիմամիկան 1995-2006թթ. ընկած ժամանակահատվածում (մլն. ԱՄՆ դոլար)

Աղյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

Հակառակ դրամ, 2002թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդի զգալի նվազումը բացատրվում է նրանով, որ արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծման աճի տեմպին: 2002թ. արտահանման աճի տեմպը կազմել է 47.9%, իսկ ներմուծմանը՝ 13.3%, որի արդյունքում արտահանումը կազմել է 507.1 ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը 991.0 մլն. ԱՄՆ դոլար:


Տվյալները փաստում են, որ 2003-2006թթ. կրկին գրանցվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի բավական մեծ աճ: 2006թ. առևտրային հաշվեկշռի պակասուրդը կազմել է 1206.5 մլն. ԱՄՆ դոլար, որը 2002թ. ցուցանիշի հետ համեմատ աճել է մոտ 2.5 անգամ: Սակայն, առևտրային հաշվեկշռի այս պակասուրդի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ 2003-2005թթ. ընկած ժամանակահատվածում թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ցուցանիշներով նկատվել է երկուառեր բավական մեծ աճի տեմպեր: 2003թ. ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 28.1%, կազմելով 1269.4 մլն. ԱՄՆ դոլար, իսկ արտահանման ծավալները աճել են 33.7%-ով՝ կազմելով 678.1 մլն. ԱՄՆ դոլար: Չնայած նրան, որ 2003թ. արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 33.7, իսկ ներմուծմանը՝ 28.1%, առևտրային հաշվեկշռի պակասուրդը նախորդ տարվա համեմատ մեծացել է: Դա հիմնականում պայմանավորվել է այն փաստով, որ 2002թ. ներմուծումը մոտ երկու անգամ գերազանցել է արտահանմանը: Ավելին, եթե 2005թ. ներմուծման ծավալները նախորդ տարվա հետ համեմատ աճել են 33.3%, իսկ արտահանման ծավալները՝ 31.8%, ապա 2006թ. ներմուծման ծավալները 2005թ. համեմատ աճել են 21.6%, իսկ արտահանման ծավալները՝ 1.1%:

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ ՀՀ արտաքին առևտուրի ջաղաքականությունը, որը բավական ազատական էր և կ ավելի ազատականացվեց ԱՀԿ անդամակցությամբ, ապահովել է առևտրային հաշվեկշռի զգալի մեծ պակասուրդ: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը սկզբնական շրջանում հիմնականում պայմանավորվել է ներմուծման ծավալների աճով, իսկ արդեն 2003թ.՝ միաժամանակ ներմուծման և արտահանման աճով:


ՀՀ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելի մանրամասն դիտարկելու նպատակով անհրաժեշտ է քննարկել դրա տարածքային տեղաբաշխումը: Այսպես, ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտուրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտուրի ծավալներին: Սակայն ի տարրերություն ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրի, ԵՄ հետ արտաքին առևտուրը ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպես, 1993-1998թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրում և արտահանման, և ներմուծման ծավալները զգալի գերազանցել են ԵՄ երկրներ արտահանման և ԵՄ երկրներից ներմուծման ծավալներին (տես՝ գծապատկեր 2 և գծապատկեր 3):

1998թ. ԵՄ և ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները գրեթե հավասարվել են՝ կազմելով համապատասխանաբար 259.4 և 221.4 մլն. ԱՄՆ դոլար: Այնուհետև, մինչև 2001թ. զգալի կրճատվել է ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալները և հակառակ դրան աճել է ԵՄ երկրներից ներմուծման ծավալները: Ակսած 2002թ. մեծ տեմպերով միաժամանակ աճել է և ԱՊՀ, և ԵՄ երկրներից ներմուծման ծավալները՝ 2006թ. կազմելով համապատասխանաբար 571.5 և 691.1 մլն. ԱՄՆ դոլար: Նմանատիպ օրինաչափություն առկա է նաև ԱՊՀ և ԵՄ երկրներ արտահանման մեջ (տես՝ գծապատկեր 3): Այսպիսով, 1993-2002թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրը կրել է «պարուրած բնույթ»: Այսինքն, եթե նվազել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրի ծավալները, աճել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտուրի ծավալները, իսկ եթե նվազել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտուրի ծավալները, աճել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրի ծավալները:

Ընդհանուր առմամբ, եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտուրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտուրի ամենազլավոր գործընկերը ԵՄ-ն է:



Գծապատկեր 2. ԵՄՆ ԱՊՀ երկրներից ներմուծման ծավալների դիմամիկան 1993-2006թթ. (մլն. ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 3. ԵՄՆ ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների դիմամիկան 1993-2006թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

Այսպես, 1993-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ երկրների հետ անընդհատ աճել է՝ ընդ որում, միաժամանակ աճել է և արտահանման, և ներմուծման ծավալները: Սակայն, պատկերը փոխվում է 2001թ., երբ 17,1%-ով կրճատվում է ԵՄ արտահանման ծավալը՝ կազմելով 88,6 մլն. ԱՄՆ դոլար: Այսուհետև 2002-2003թթ. ընկած ժամանակաշրջանում գրեթե երկու անգամ աճում է Հայաստանից ԵՄ արտահանման ծավալները: Նմանապես 2001թ. 16,5%-ով կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծման ծավալը՝ կազմելով 252,2 մլն. ԱՄՆ դոլար:

2003-2005թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանից ԵՄ արտահանման ծավալը աճել է 83.0%-ով, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծման ծավալը՝ 85.5%-ով: ԵՄ հետ արտաքին առևտրաշրջանառության նման աշխուժացնումը կարելի է բացատրել այն փաստով, որ 2003թ. սկզբին ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը ԵՄ երկրների շուկաներն էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական ապրանքների համար: Միևնույն ժամանակ, ԱՀԿ անդամակցությունը նաև էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական շուկան եվրոպական ապրանքների համար: Մյուս կողմից, հարկ է նշել, որ ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացնումը նաև կրել է ավտոնոմ բնույթ: Այսինքն, ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալների ավելացնում գրանցվել է նաև մինչև ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը, իսկ ԱՀԿ անդամակցությունը լրացրուիչ արագացնուիչ հանդիսացավ այդ գործընթացի համար:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, եթե 1993-1997թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենազիստավոր գործընկերը ԵՄ-ն է: Այսպես, 2006թ. տվյալներով ՀՀ և ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1164.4 մլն. ԱՄՆ դոլար՝ այդ բարում արտահանումը կազմել է 473.4, իսկ ներմուծումը՝ 691.0 մլն. ԱՄՆ դոլար: ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը ԱՊՀ երկրների հետ կազմել է 783.9 մլն. ԱՄՆ դոլար՝ ընդ որում արտահանումը կազմել է 212.4, իսկ ներմուծումը 571.5 մլն. ԱՄՆ դոլար: Ինչպես նկատում ենք, ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը գրեթե 1.5 անգամ գերազանցում է ԱՊՀ երկրների հետ, արտաքին ապրանքաշրջանառությանը: Ավելին, ՀՀ արտաքին առևտուրը ինչպես ԵՄ երկրների հետ այնպես էլ ԱՊՀ երկրների հետ շատ կենտրոնացված է (տես՝ աղյուսակ 1, աղյուսակ 2):

¹ ԵՄ հետ ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2004-2006թթ. բերված են ԵՄ 25 երկրների համար:

Աղյուսակ 1.

ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հիմնական գործողների երկրների հետ 2006թ. (մլն. ԱՄՆ դրամ)

	Բնելգիա	Գերմանիա	Նիդերլանդներ	Իտալիա	Հունաստան
Արտահանում	108.8	148.0	126.9	28.9	0.6
Ներմուծում	157.1	85.0	22.2	76.4	80.6
Բաժինը ԵՄ բնդի ապրանք. մեջ (%)	22,8%	20,0%	12,8%	9,0%	6,9

Աղյուսակ 2.

ՀՀ արտաքին առևտուրը ԱՊՀ հիմնական գործողների երկրների հետ 2006թ. (մլն. ԱՄՆ դրամ)

	Ուստաստան	Վրաստան	Ուկրաինա
Արտահանում	121.1	54.6	22.5
Ներմուծում	364.7	75.6	109.1
Բաժինը ԱՊՀ բնդի ապրանքաշրջ. մեջ (%)	61.2	16.2	16.5

Ամեն դեպքում, այլ հավասար պայմաններում, ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրի աշխարհագրական կառուցվածքը համեմատելիս, կարող ենք նշել, որ ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրը էլ ավելի կենտրոնացված է (միայն Ուստաստանին բաժինն է ընկնում 61,2%), քան ԵՄ երկրների հետ: ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտուրի կենտրոնացվածությունը մեկնարանվում է այն փաստով, որ ԵՄ 25 երկրներից Հայաստանի գլխավոր առևտրային գործողների երկրներն են՝ Բնելգիան, որին բաժինն է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 22,8%-ը, Գերմանիան (20,0%), Նիդերլանդները (12.8%), Իտալիան (9.0), Հունաստանը (6.9%) և Ֆրանսիան (3.5%): Ընդհանուր առմամբ նշված երկրներին բաժինն է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտուրի 79,8%-ը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ չնայած Ֆրանսիայի հետ Հայաստանի բավական սերտ կապերին, Ֆրանսիային բաժինն է ընկնում ԵՄ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտուրի 3.5%-ը: Ամեն դեպքում, ՀՀ կապերը Ֆրանսիայի հետ չեն սահմանափակվում միայն արտաքին առևտրով: Այսպես, 1992-2006թ. ընթացքում Ֆրանսիայից Հայաստան կատարվել է ավելի քան 120 մլն. ԱՄՆ դրամի օտարերկրյա ուղղակի ներդրումները: 2006թ. հունվարի 1-ի դրույթամբ Հայաստանում գործում էին 111 ձեռնարկություններ և ընկերություններ ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ:

Եթե ԱՊՀ երկրների հետ առևտրում նկատվում է աշխարհագրական կենտրոնացվածություն, ապա ԵՄ երկրների հետ առևտրում զգալի կենտրոնացվածություն է նկատվում ապրանքային կառուցվածքում (տես՝ աղյուսակ 3): Ի տարրերություն ԵՄ երկրների հետ առևտուրի, ԱՊՀ երկրների, մասնավորապես՝ Ուստաստանի, հետ առևտրում ապրանքային կառուցվածքում առկա չէ զգալի կենտրոնացվածություն:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի տվյալները, ՀՀ և ԵՄ հիմնական գործողների երկրների միջև արտաքին առևտուրի ապրանքային կառուցվածքում գերակշռություն են մետաղները, մասնավորապես՝ սև մետաղներ, պղինձ և այլ ոչ բանկարժեք մետաղներ, բանկարժեք քարերը, մեքենաները և սարքավորումները, քիմիական ապրանքները, տրանսպորտային միջոցները, սննդամթերքը և տեքստիլ իրենք:

Աղյուսակ 3.

ԵՄ հիմնական գործողների երկրների հետ առևտրում զյուավոր ապրանքախմբերը 2006թ. (մլն. ԱՄՆ դրամ)

	Բնելգիա		Գերմանիա		Նիդերլանդներ		Իտալիա		Հունաստան		
	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	
Սև մետաղներ և իրեր	-	-	64.9	-	109.7	-	-	-	8.1	-	7.1
Պոլիմեր	-	-	71.3	-	3.3	-	-	-	-	-	-
Սարքավորումներ	-	-	-	-	17.7	-	1.6	-	24.2	-	6.0
Տրանսպորտային միջոցներ	-	-	-	-	69.1	-	-	-	1.0	-	-
Թանկարժեք քարեր և մետաղներ	108.1	108.9	-	-	-	-	-	-	6.3	-	-
Տեքստիլ Հագուստ	-	-	-	-	-	-	-	-	20.2	10.1	-
Տրիկոտաժե հագուստ	-	-	-	-	-	-	-	-	3.8	2.5	-
Կահույք	-	-	-	-	-	-	-	-	2.7	-	4.2
Էլեկտրական սարքավորումներ	-	-	-	-	18.2	-	-	-	8.3	-	19.1
Դեղագործական Մթերք	-	-	-	-	4.8	-	1.5	-	2.0	-	-
Բժշկական ապարատներ	-	-	-	-	5.5	-	1.5	-	1.1	-	-
Շխախոտ	-	-	-	-	2.2	-	-	-	-	-	6.1
Ապակի և ապակե իրեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

Այսպես, Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում մետաղները, ըստ որում, 2005թ. մետաղների բաժինը դեպի ԵՄ ընդհանուր արտահանման մեջ կազմել է 55%, իսկ 2006թ. 61.9%¹: Մետաղները արտահանվում են հիմնականում Գերմանիա և Նիդերլանդներ: Հայաստանից ԵՄ արտահանվում են նաև բանկարժեք քարեր (25.6%), որոնք ներմուծվում են, վերամշակվում և վերարտահանվում ԵՄ (մասնաւորապես՝ Բելգիա), տեքստիլ իրեր (3.9%) և այլն:

2006թ. տվյալներով ԵՄ-ից Հայաստան ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել մեքենաները և սարքավորումները, փոխադրամիջոցները, որոնց բաժինը է ընկել ԵՄ-ից ընդհանուր ներմուծման 30.7%: Հայաստանը ԵՄ-ից ներմուծում է նաև բանկարժեք քարեր (27.6%), քիմիական ապրանքներ (7.4%), սննդամբերը (6.7), տեքստիլ իրեր (5.8%) և այլն:

Այսուակ 3-ի տվյալները փաստում են, որ ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտության ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնցում է նկատվում Բելգիայի և Նիդերլանդների հետ արտաքին առևտության առևտության բացառապես բանկարժեք քարերի գծով, իսկ Նիդերլանդների հետ արտաքին առևտության բացառապես մետաղների գծով: Գերմանիայի, Խորհրդայի Հունաստանի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտության նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով):

Չնայած նրան, որ ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները գնալով զարգանում, են ՀՀ և ԵՄ միջև իրականացվող արտաքին առևտությունը չի զարգանում իր հնարավոր արդյունավետությամբ: Մասնավորապես, ԵՄ հետ արտաքին առևտության կառուցվածքում գրեթե բացակայում են պատրաստի սպառողական ապրանքները (բացառությամբ Խորհրդայի հետ արտաքին առևտության): Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հայկական սպառողական ապրանքները ներարկվում են գնային և որակական բարձր մրցակցության ԵՄ երկրների շուկաներում: Սակայն, ամեն դեպքում, մեր կարծիքով, այս սահմանափակումը կարելի է հետագայում բացառել համատեղ ծեռնարկությունների առեղծման և ԵՄ երկրներից օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: ԵՄ երկրների ծեռնարկատերերի հետ համատեղ ծեռնարկությունների ստեղծումը և օտարերկրյա ներդրումների ավելացումը բույլ կտան Հայաստանին հաղթահարել առկա տեխնոլոգիական բարդությունները և արտադրել մրցունակ արտադրանք, որը կարող է սպառվել ոչ միայն ԵՄ երկրների, այլ համաշխարհային շուկայում:

Այժմ փորձենք պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել ՀՀ արտաքին առևտություն տնտեսական աճի վրա: Այսպես, եթե 1994-2000թթ. ընկած ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է տարեկան 5%, ապա 2001-2006թթ. ընկած ժամանակաշրջանում այն կազմել է 11%: Ուսումնասիրելով ՀՀ արտաքին առևտության դիմամիկան (Տես՝ Գծապատճեր 1), կարելի է փաստել, որ առաջին ժամանակահատվածում (1994-2000թթ.) ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների նկատելի փոփոխություն չի նկատվել: ՀՀ արտաքին առևտությունը զգալի աշխուժություն է նկատվել սկսած 2001թ.՝ պայմանավորված ներմուծման և արտահանման ծավալների աճի մեջ տեմպերով:

ՀՀ տնտեսական աճին խթանել է նաև այն հանգամանքը, որ նշված ժամանակաշրջանում Հայաստանը օժանդակություն է ստացել տարբեր միջազգային կազմակերպություններից և տնտեսության համար մեծ դեր են ունեցել մասնավոր փոխանցումները: Հայաստանում եկամուտները և ներդրումները դեռևս շարունակում են հիմնվել օտարերկրյա խնայողությունների վրա, մինչեւ տեղական խնայողությունների մակարդակը, որն ունի աճի միտում, դեռևս բավական ցածր է: Այսպես, եթե 2004թ. տեղական խնայողությունների մակարդակը կազմում էր ՀՆԱ-ի 10.1%-ը, ապա 2005թ. այն կազմում էր ՀՆԱ-ի 16.7%-ը: Մյուս կողմից, եթե 1999թ. ընդհանուր ներդրումների 90%-ը ֆինանսավորվում էր օտարերկրյա խնայողություններով, ապա 2004թ. այս ցուցանիշը կազմում էր 30%: 1996-2000թթ. ընկած ժամանակաշրջանում ընդհանուր ներդրումների միջին մակարդակը կազմել է ՀՆԱ-ի 19%-ը, իսկ 2001-2006թթ. ընկած ժամանակաշրջանում՝ 24.7%-ը: Ընդհանուր ներդրումներում օտարերկրյա խնայողությունների բաժնի նվազումը չի թերևս ներդրումների ծավալի նվազման, քանի որ ընդհանուր ներդրումներում աճել է տեղական խնայողությունների բաժնը:

Հարկ է նշել, որ վերջին տասնամյակում Հայաստանի տնտեսական աճը չի ուղեկցվում զարդարական աճով: Վերջին 15 տարվա ընթացքում Հայաստանում զարդարական աճը կազմելով 1,097 հազ. մարդ: Ամեն դեպքում միտում կա, որ աշխատուժի շուկայում իրավիճակը կրարելավավի: Այսպես, գրանցված գործազրկների թիվը, որոնք փնտրում են աշխատանք, 2003-2005թթ. 147,000 կրճատվել է մինչև 88,900 մարդ: Ավելին, 2005թ. տվյալներով ՀՆԱ-ի 20.5%-ը ապահովում էր գյուղատնտեսությունը և այստեղ ներգրավված էր տնտեսապես ակտիվ բնակչության ավելի քան 45%-ը: Համեմատության համար նշենք, որ ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանարար միջինում 4,5 և 20%: Ավելին, Հայաստանում ծառայությունների ոլորտին բաժնը ընկենում ՀՆԱ-ի 35.2% (ԵՄ անդամակցած նոր երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է 60%): Որպես փոքր զարգացող երկիր Հայաստանի տնտեսության զարգացումը ամբողջությամբ կախված է արտաքին շուկաներից:

Այսիսով, չնայած Հայաստանի աշխարհագրական դիրքին, վերջին տարիներին արտաքին առևտության (մասնավորապես արտահանման ծավալների աճը) մեծ ազդեցություն է ունեցել տնտեսական աճի խթանման գործընթացի վրա: Հայաստանում շատ արագ տեմպերով զարգանում է այնպիսի ապրանքների արտադրությունը, որոնք պահանջում են փոխադրման ցածր ծախսեր և ունեն բարձր ավելացված արժեք (աղամանի վերամշակում և համակարգչային ծրագրեր): Տնտեսական աճին նպաստող գործուներից են նաև որակավորում ունեցող ցածրարժեք աշխատուժի և հայկական սփյուռքը: Վերջինս Հայաստան փոխանցող դրամական միջոցներով խթանում է ներդրումների և տեղական պահանջարկի ավելացմանը:

¹ Աղյուր՝ Eurostat, Statistical regime 4, Armenia.